## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/17>>

ք. Երևան <<15>> ապրիլի 2022թ.

ՀՀ դատախազությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի որը գործում է ՀՀ դատախազության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ա. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) չընդունել ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3. Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4. Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է 15990900 (տասնհինգ միլիոն ինը հարյուր իննսուն հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի այդ մասի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ դատախազություն** | **ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ** |
| **ք.Երևան, Վ.Սարգսյան 5** | **ք.Երևան, Իսակովի 24** |
| **ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.** | **ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ** |
| **Հ/Հ 900011180214** | **Հ/Հ 900018005588** |
| **ՀՎՀՀ 02506634** | **ՀՎՀՀ 01836525** |
| ------------------------------ **Հ. Նավասարդյան** | ------------------------------ **Ա. Հովսեփյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«15» ապրիլի 2022 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

<table>
<tr><th colspan="8">Ծառայության</th></tr>
<tr><th rowspan="2">հրավերով նախատեսված չափաբաժնի համարը</th><th rowspan="2">գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)</th><th rowspan="2">տեխնիկական բնութագիրը</th><th rowspan="2">չափման միավորը</th><th rowspan="2">ընդհանուր գինը/ՀՀ դրամ</th><th rowspan="2">ընդհանուր քանակը</th><th colspan="2">մատուցման</th></tr>
<tr><th>հասցեն</th><th>ժամկետը**</th></tr>
<tr><td>1</td><td>79631200/1</td><td>Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ.<br>Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում՝ փորձաքննություններ նշանակելու և ելակետային փչյալների ծեռքբերման իրավասություն ունեցող աշխատակիցների դատափորձագիտական բնագավառում մասնագիտական վերապատրաստման որակավորման բարձրացման դասընթացներ.<br>1. Նշված դասընթացների ուսումնական ծրագիրը պետք է կազմված լինի հաստատված համապատասխան ծրագիր-սեղմագրերից՝ առնվազն թվով 40 թեմաների ընդգրկմամբ՝ ՀՀ կառավարության 2021թ. թիվ 1864-Լ որոշմամբ սահմանված փորձաքննության տեսակների ներառումով, յուրաքանչյուր ծրագիր-սեղմագիր բաղկացած փորձաքննությունների առնվազն 25 տեսակների ենթատեսակներին համապատասխան թեմաներից:<br>Փորձաքննությունների թվով 25 տեսակներն են.<br>1. Ձեռագրաբանական,<br>2. Հեղինակային,<br>3. Փաստաթղթաբանական,<br>4. Տեսածայնագրային,<br>5. Ֆոտոտեխնիկական և դիմանկարային,<br>6. Հետքաբանական,<br>7. Ձգաբանական,<br>8. Պայթյունատեխնիկական,<br>9. Նյութագիտական,<br>10. Մննդամթերքի և խմիչքների,<br>11. Հողագիտական և կենսաբանական,</td><td>դրամ</td><td>15990900</td><td>1</td><td>ք.Երևան, Իսակովի 24</td><td>պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2022թ.</td></tr>
</table>

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 12. Հրդեհատեխնիկական,<br>13. Շինարարատեխնիկական,<br>14. Ավտոտեխնիկական,<br>15. Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական,<br>16. Ապրանքագիտական,<br>17. Համակարգչատեխնիկական,<br>18. Դատաբժշկական,<br>19. Մշակութային արժեքների,<br>20. Հոգեբանական,<br>21. Ճարտարագիտատեխնիկական,<br>22. Լինգվիստիկական<br>23. Էկոլոգիական<br>24. Պայթյունատեխնոլոգիական<br>25. Մտավոր սեփականության օբյեկտների<br>2. Յուրաքանչյուր խմբի դասընթացների համար կազմված ծրագիր-առաջարկով հաստատված թեմաների առնվազն 95%-ը պետք է դասավանդվեն փորձաքննության վերը նշված տեսակներով դատական փորձագետի համապատասխան որակավորում ունեցող բարձրագույն կրթությամբ մասնագետների կողմից՝ ներկայացնելով ըստ փորձագիտական բնագավառների առկա արդի հնարավորությունները, վերլուծելով պարզման ենթակա հարցերի շրջանակը, եկակետային տվյալների ձեռք բերման և փորձաքննությունների իրականացման ընթացքի առանձնահատկություններն ու սպասվող արդյունքները, ընդ որում լաբորատոր բաղադրիչ ունեցող փորձաքննությունների տեսակներով ոչ արտագնա դասընթացներին պետք է կիրառվեն նաև ժամանակակից լաբորատոր սարք-սարքավորումներ և համակարգչային տեխնիկա՝ դիդակտիկ նյութերի ցուցադրումով: Դասընթացները պետք է իրականացվեն ինչպես համապատասխան կահավորված լսարաններում /նաև դատափորձագիտական համապատասխան լաբորատորիաներում գործնական բաղադրիչի ցուցադրումով/, այնպես էլ արտագնա դասընթացների իրականացման միջոցով, անհրաժեշտության դեպքում նաև Արցախի Հանրապետությունում: Յուրաքանչյուր խմբի դասընթացների թեմաների առավելագույնը մինչև 5%-ը կարող են իրականացվել փորձագիտական բնագավառի հարակից՝ քրեաբանության թեմաներով՝ միևնույն սկզբունքով:<br>3. Դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում ունկնդիրներին պետք է դասավանդել ըստ 1-ին կետում նշված ծրագիր- | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սեղմագրերի՝ առնվազն թվով 40 թեմաներով՝ շեշտը դնելով փորձագիտական նոր տեսակների և ենթատեսակների, տեխնոլոգիական նորագույն սարք-սարքավորումների և մեթոդիկաների կիրառմամբ իրականացվող փորձաքննությունների առանձնահատկությունների վրա:<br>**4.** Դասընթացների տևողությունը յուրաքանչյուր խմբի համար պետք է լինի միջինը 5՝ միմյանց հաջորդող աշխատանքային օր, դասընթացները պետք է իրականացվեն յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը $9^{00}$-ից $18^{00}$ ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր դասաժամի տևողությունը 30 րոպե,<br>5-օրյա դասընթացի ընթացքում յուրաքանչյուր դասախոս պետք է ներգրավվի դասավանդման միայն իր դատական փորձագետի որակավորման բնագավառով՝ մեկից երեք վերը նշված փորձաքննությնների համապատասխան տեսակների թեմաներով:<br>**5.** Դասավանդմանը ներգրավված յուրաքանչյուր դասախոս պետք է ունենա նմանատիպ դասընթացի դասավանդման և իր դատական փորձագետի որակավորման համապատասխան տեսակով փորձաքննությունների կատարման փորձառություն:<br>**6.** Դասընթացները պետք է իրականացնել ընդհանուր՝ 337 ունկնդրի համար, առանձին խմբերով, յուրաքանչյուր խմբում միջինում 12 ունկնդիր:<br>**7.** Ուսուցման խմբերի քանակը՝ մինչև 28:<br>**8.** Դասընթացների քանակը՝ մինչև 28 (յուրաքանչյուր խմբի համար դասընթացը պետք է բաղկացած լինի առնվազն թվով 40 թեմայից, առնվազն 71 դասաժամով):<br>**9.** Առնվազն 12 հոգու համար նախատեսված համապատասխան լսարանային պայմանների ապահովում:<br>**10.** Յուրաքանչյուր խմբի դասընթացների ավարտման վերջին օրը մասնակից ունկնդիրները պետք է հանձնեն դասընթացների արդյունքում ձեռք բերված գիտելիքների ստուգման գրավոր քննական թեստ՝ բաղկացած առնվազն 30 փորձաքննության տեսակներով դասավանդված բոլոր թեմաներից հարցերից:<br>**11.** Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքների ստուգման գրավոր քննական թեստերը հաջողությամբ հանձնած (հարցերի կեսից ավելի դրական պատասխանի դեպքում) ունկնդիրներին պետք է տրվեն համապատասխան վկայագրեր:<br>Իրավասու մարմիններից (փորձաքննություններ նշանակելու և ելակետային տվյալների ձեռքբերման իրավասություն ունեցող աշխատակիցների ղեկավարներից) համապատասխան առաջարկի դեպքում՝ նախատեսված | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | քանակական և որակական արդյունքային ցուցանիշների պահպանմամբ, անհրաժեշտության դեպքում կազմակերպել նաև արտագնա դասընթացներ՝ այդ թվում ՀՀ մարզերում և Արցախի Հանրապետությունում, որոնց կազմակերպման և անցկացման համար ապահովել նաև անհրաժեշտ համակարգիչ /ներ/, պրոյեկտոր, նկարներ, տեսագրություններ, սլայդեր (դիդակտիկ նյութեր), սխեմաներ, աղյուսակներ և այլ անհրաժեշտ սարքեր և նյութեր: | | | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180214
ՀՎՀՀ 02506634

------------------------------ Հ. Նավասարդյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք.Երևան, Իսակովի 24
ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005588
ՀՎՀՀ 01836525

------------------------------ Ա. Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*«15» ապրիլի 2022 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ այդ թվում** | | | | |
| | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 79631200/1 | Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | - | 7195.9 | 11193.6 | 15990.9 | **15990.9** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ դատախազություն<br>ք.Երևան, Վ.Սարգսյան 5<br>ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.<br>Հ/Հ 900011180214<br>ՀՎՀՀ 02506634 | ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ<br>ք.Երևան, Իսակովի 24<br>ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ<br>Հ/Հ 900018005588<br>ՀՎՀՀ 01836525 |
| ------------------- Հ. Նավասարդյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | ------------------- Ա. Հովսեփյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

*Հավելված 3*
*«15» ապրիլի 2022 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հհ ____________________________
______________________________
հվհհ __________________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հհ ____________________________
______________________________
հվհհ __________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«15» ապրիլի 2022 թ. կնքված*
*N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ________________ ____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն